

13492



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Երզրակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

« 06 » 12 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 269 - 24

Նախաձեռնող՝

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ

Ք. Երևան, Չարենցի փ. 1

Գործունեությունը՝

Ախտության համայնքի Քեթի բնակավայրում

կրթահամալիրի կառուցում

Շիրակի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԷԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 269 - 24

« 06 » դեկտեմբեր 2024թ.

**Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Քեթի բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, Քեթի բնակավայր

**Ներածական մաս.** «ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված գնահատման հաշվետվությամբ նախատեսվում է Շիրակի մարզի Քեթին բնակավայրի 7-րդ փողոց, 1/3 հողամաս հասցեում կրթահամալիրի կառուցում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող գործունեության տարածքն իրենից ներկայացնում է հարթ ռելիեֆով կառուցապատումից ազատ, ծառազուրկ հողամաս: Ռելիեֆի մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1715-1721 մետրի սահմաններում: Տարածքի ամենամոտ շենք շինությունները տեղակայված են նախատեսվող գործունեության տարածքի եզրագծից մոտ 70-100 մ հեռավորության վրա:

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը մինչև 6.2 մետր խորությամբ չեն բացահայտվել:

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, պատամամշակության հուշարձանները, բնության հուշարձանները:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողատարածքի ընդհանուր մակերեսը՝ 11228.80 մ<sup>2</sup>,
- կառուցապատման ընդհանուր մակերեսը՝ 3630.50 մ<sup>2</sup>,
- կանաչապատման մակերեսը՝ 5530.20 մ<sup>2</sup>,



- բարեկարգման մակերեսը՝ 2188.1 մ<sup>2</sup>:

Համաձայն նախագծի՝ կրթահամալիրն իրենից ներկայացնում է երեք իրար կապվող մասնաշենք՝ 144 աշակերտի համար նախատեսված երկհարկանի դպրոց և մեկ հարկանի մանկապարտեզ 40 սանի համար: Դպրոցը նախատեսված է 1-ինից մինչև 12-րդ դասարանների ուսումնական ծրագրերի դասընթացների կազմակերպման նպատակով: Նախագծով նախատեսված են դասասենյակներ, ինֆորմատիկայի կաբինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության սենյակ, ռոբոտատեխնիկայի սենյակ և ուսուցչանոց, 144 նստատեղով նախատեսված դահլիճ: Դասասենյակները կահավորված են լինելու անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Դպրոցն ապահովված է լինելու բժշկի կաբինետով՝ կահավորված անհրաժեշտ բժշկական կահույքով: Դպրոցի նկուղն ունենալու է 21.6x20.4 մ չափեր, որտեղ նախատեսված է գրադարան, խոհանոց, բուժկետ, պահոցներ, սանհանգույցներ, էլեկտրավահանակ, ջրի ռեզերվուար, կաթսայատուն և պոմպարան: Նկուղային հարկն անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես թաքստոց:

Մանկապարտեզը նախատեսված է 40 տեղանոց 2 խմբի համար: Խմբերը համալրված են լինելու հանդերձարաններով, ննջարաններով, խմբակային սենյակներով, բուֆետներով և սանհանգույցով: Մանկապարտեզում նախատեսված է բժշկի կաբինետ և վարչական սենյակ:

Կրթահամալիրի վերգետնյա հարկերի ջեռուցման համար նախատեսված է ավտոմատացված ջրային երկու էլեկտրակաթսա՝ յուրաքանչյուրը 120կՎտ հզորությամբ, իսկ նկուղային հարկի ջեռուցման համար՝ էլեկտրական յուղային ռադիատորներ:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ կրթահամալիրն ապահովված է լինելու թեքահարթակներով, նախատեսված է հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների սենյակ, սանհանգույց և այլ միջոցառումներ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար: Կրթահամալիրի մուտքը կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

Կրթահամալիրի բակում նախատեսվում է տեղադրել 149.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ կազմված 272 հատ 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներ: Շենքի էլեկտրամատակարարումը և դպրոցի էլեկտրաէներգիայի հաշվառումն իրականացվելու է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ փոխադարձ համաձայնության սկզբունքով՝ դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ: Արևային պանելների տեղադրումն իրականացվելու է համապատասխան սերտիֆիկատ ունեցող ընկերությունների կողմից, որոնց կողմից իրականացվելու է նաև հետագա սպասարկման և շարքից դուրս եկած վահանակների խոտանման աշխատանքները:

Կրթահամալիրի ջրամատակարարումը և էլեկտրամատակարարումն իրականացվելու են՝ համաձայն ենթակառուցվածքները տնօրինող կազմակերպությունների կողմից տրված տեխնիկական պայմանի:

Համաձայն հաշվետվության՝ շինարարական աշխատանքները տևելու են 624 աշխատանքային օր, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ ավտոկոունկ, էքսկավատոր, ավտոինքնաթափ և այլն:

Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ, մետաղական կառուցվածքներ, ամրան, ավազ, ապակի, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են



մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, տրանսպորտային միջոցների անիվների լվացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Ջրօգտագործումն ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (44 մարդ), կկազմի 716.3 մ<sup>3</sup>/շին.ժամ: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 3600 մ<sup>3</sup>/շին.ժամ: Ջրցանի և անիվների լվացման համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 4946.3 մ<sup>3</sup>/շին.ժամ:

Կրթահամալիրի կառուցման աշխատանքների ընթացքում կատարվելու է մոտ 26113 մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից 7000 մ<sup>3</sup> կօգտագործվի հետլիցքի համար, իսկ վելացած 19113 մ<sup>3</sup> հողային զանգվածը կտեղափոխվի Ախուրյան համայնքի կողմից տրամադրված վայր: Հանվող բուսահողի ծավալը կկազմի մոտ 4800մ<sup>3</sup>, որի հանման, պահման և հետագա օգտագործման աշխատանքները կհականացվեն Կառավարության 2017թ. նոյեմբերի 2-ի թիվ N1404 որոշման պահանջներին համաձայն:

Շինարարական աշխատանքների իրականացման փուլում կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 1.5\*1 չափերի 2 աղբարկղ: Մոտ 9 մ<sup>3</sup> ծավալով կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ընթացքում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է ըստ լցվածության, մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է շինարարական հրապարակին կից տեղադրել պլաստմասե պարզարան, որտեղ կուղղորդվեն անձրևաջրերը և անիվների լվացման ջրերը: Պարզարանի պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանի համար, իսկ փոքր քանակներով տիղմն, ինչն իրենից ներկայացնում է շինտեխնիկայի անիվների լվացումից առաջացած հողի, ավազի և այլ մնացորդային նստվածք, մնացած աղբի հետ կտեղափոխվի աղբավայր:

Կենցաղային կոյուղու ցանցը համակցված է: Կառուցվելու է Տոպաս 10 տիպի մաքրման կայան: Կենսաբանական մաքրման ենթարկված կեղտաջրերը, նվազեցնելով իրենց բակտերիալ աղտոտվածությունը, ստորգետնյա խողովակներով կթափվեն է տարածքում նախատեսված ռեզերվուար և կօգտագործվի ոռոգման համար: Ավելցուկային ջրերի հեռացման համար նախատեսված է 15.0 մ խորությամբ դրենաժային հորատանցք:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատման նպատակով տնկվելու են ծառեր՝ 10 հատ թղկի, գնդածր իլենի՝ 16, սյունածեղ թույա՝ 10, բարդի արծաթափայլ՝ 24 և սիզամարգեր՝ 5330.20 մ<sup>2</sup> համաձայն Ախուրյան համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման հետ:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրադրությունների որակի






- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

## ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ- ի կողմից ներկայացված Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Քեթի բնակավայրի կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝  Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝  Արիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝  Ռուզան Մակինյան